# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Ապրիլի 1-ին, կիրակի.- Զ. կիրակի Քառասնորդական Պահոց (Գալըստեան):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վաչե քհն. Հայրապետյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը քարոզ խոսեց՝ «Որ զխորհուրդ քո գալստեանդ՝ յառաջագոյն գուշակեցեր» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Ապրիլի 8-ին, կիրակի.- Ծաղկազարդ: Պահք:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Շնորհեա մեզ, Տէր, ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրանաց» բնաբանով:

Երեկոյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց Դռնբացեքի արարողություն:

***Ապրիլի 12-ին, Աւագ հինգշաբթի.- Պահք: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մարկոս աբղ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը ընթերցեց Ս. Բարսեղ Հայրապետի աղոթքը:

Եպմիջօրեին, երեկոյան ժամերգությունից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվեց Ոտնլվայի կարգը:

Ուշ երեկոյան Մայր Տաճարում կատարվեց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Մատնության, Չարչարանքների և Խաչելության հիշատակության կարգը:

***Ապրիլի 14-ին, Աւագ շաբաթ.- Պահք: Ճրագալոյց Զատկի:***

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Ճրագալույցի Պատարագից առաջ չորս սարկավագներ ընթերցեցին Դանիելի թուղթը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո միաբանական թափորն ուղղվեց դեպի Վեհարան, որտեղ, փնօրհնեքի արարողություն կատարելուց հետո, միաբանները Ս. Հարության տոնի առիթով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին: Այնուհետև միաբաններն ու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները շարժվեցին միաբանական սեղանատուն՝ նշելու Տիրոջ Հրաշափառ Հարության տոնը:

Միրո ճաշը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով:

***Ապրիլի 15-ին, կիրակի.- ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզ խոսեց՝ «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք...» (Հովհ. ԺԱ 25) բնաբանով (տե՛ս էջ 3):

Ս. Պատարագի վերջում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ազգային Ժողովի պատգամավորներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և հավատացյալների հոծ բազմություն:

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որտեղ հրավիրվածները շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին Քրիստոսի Հարության տոնի առիթով:

***Ապրիլի 16-ին, երկուշաբթի.- Բ. օր Զատկի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս արդ. Մալխասյանը:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Ապրիլի 22-ին, կիրակի.- Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մուշեղ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Մերկացարուք զհին մարդն գործովքն հիւրովք եւ զգեցարուք զնորն» (Կող. Գ 9-10) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Ապրիլի 24-ին, երեքշաբթի.- Ժ. օր Յինանց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Պատարագի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի` Յեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ` «վասն համօրէն ննջեցելոց»:

***Ապրիլի 29-ին, կիրակի.- Գ. կիրակի. Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգոր արղ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց: